ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 նոյեմբերի 2024 թվականի № 442-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐԱԳՅՈՒՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման հավելվածի 10-րդ և 94-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ***2025 թվականի հունվարի 17-ին ժամը՝ 11:00-ին*** անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը *(անձնակազմի կառավարման բաժնին)* Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման համաձայն՝ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված մրցույթի կազմակերպումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 8
ք. Հրազդան